

հուն ասեա՝ նորա միտքն այս է, թէ մէկ մի ի մերայոց նստի, թո՛ղ քաղաքս աւելի. և զու լինաս պարտական. և զայլ մանր մասնաբար խաչատուր կաթուղիկոսն մի ըստ միովէ բերանով պատմէ հրամանացոյ: Այլ խորհեա՛ և հոգս մեծ արա՛ զաթուղ, յոր կոչեցար՝ թէ որո՛վ հնարիւք հնացուցանես զշէնդ. ահա՛ մարդ չի մնաց, ո՛վ հոգայ և ցաւի, զի երթեալ զաղարեսցես ի տեղիդ իբրեւ ջահ ի վերայ աշտանակի, մխթարելով զեկեալս առ քեզ, որպէս սովորն ես: Այլ և ի վերայ այսց, ո՛վ Տէր իմ, և զայս լու՛ւր, զի ահա Յովսէփ վարդապետն ես այնպէս հարկաւոր բան չունի ի տեղս, որ քեզ օգուտ և տանս դործ արտացէ. արդ եթէ զգա առաքեացես յաշխարհն թրակայ կամ յիզմիւրոյ մինչ Ղալսէրի, կամ ի Լեհաց տուն, զի երթեալ նըւիրակեցէ, յոյժ բարւոք լինի. զի ահա տեսանեմք որ յաջողակ մարդ մի է և ձեռացն դործ յառաջ դալ: Ահա՛ այնքան փողոյ այլ թափեցար և սրացաւ նըւիրակ այլ չունիս և եղողքն մինչև ցայժմ բանի մի այլ չբերին ի պահամ (?). լինի թէ սա մէկ օգուտ և շահ մի անէ և լու ծառայութիւն մեծանձնութեանդ և սուրբ տանն: Ահա՛ ես ինքնին երաշխաւոր ամենայն պարկեշտութեան սորա. այս մինն թո՛ղ վասն իմ առաքեա և աղօթեցուք, միթէ Սատուած իւրն օգնական լիցի. և զով կամիս առաքեա ի Պուրսա, բայց թէ զներսէս և կալսկոպոսն առաքես, հետ քաղաքացոցն լու վարի: Ողջ լի՛ր աստուածային շնորհին ի պարծանս ամենայն հայաստանեայց:

Եւ արդ ի սոյն ոճ և յիղծ մեծու փափագանօք ամենայն բարեկամք ողջունիւ երկրպագութիւն մատուցանեն զարջապարիդ, ընկալցիս զգրեալս իմ, աղաչե՛մ: Եւ զմեզ հարցանեա՛ կամք ի մերձ Սարգիս վարդապետին(*), ոչ թէ վասն փառասիրութեան և կամ ի մարդկանէ փառս որսալոյ, սակայն ծածկագիտին յայտնի է, որ զինքն չահելու և կառավարելոյ յաղաղաւ. քան զի հրամանուցդ հարազատ որդի է, մանաւանդ օրինաց և կանոնաց ջատագով և վրէժխնդիր է. զի յորժամ սիրոյ և մխի-

թարանաց զիրդ ընթերցաւ, ի նոյն ժամայն ուխտիւ և երգմամբ խոստացաւ՝ թէ զոր ինչ էֆէնտու կամք և խորհուրդն է, այնպէս վարիմ: Վասն որոյ երես ի գեանի եղեալ թախանձանօք խնդրեմ ի Տեառնէդ, որ զմեր աղերսանքն անտես չառնես. երբեմն երբեմն եթէ յատուկ զրիւ և եթէ հասարակաց զինքն մխթարես, զսիրոյն օրհնութիւն և թշնամոյն սաստ, և պատիւ առցես, որ գնան զաղարին ի չարութենէն, զի այսքան արշաւել և ձեմել Արեւելցւոց բաւական է. այսուհետեւ չեմք կորեր տեղի. զմեր քաջածն ի նոցանէ Սատուր կաթուղիկոսէն տեղեկացիր: Թէպէտ քաղաքս անտէր և առանց հովիւ չի լինար, բայց զիմ կարճամիտ խելօքս և ապտալ դունովս՝ ի սորանէ ի դատ լու մարդ չի լինար, զիրա մեր խօլին խօլայ և մեղի կարի օժանդակ է, զի որպէս ի զրի իւրում արձանացուցեալ ես, մէկ մի լինայ, որ մինչև ի մահ տիրէ, զի մի՛ այլ և այլս փոփոխելով ի ներքոյ պարտուց անկանին: Եւ խնդրեմ զայս միտս ի սրբտէղ և ի խորհրդեանդ չի որոշես, որ քաղաքիս բազմամորթս ժողովուրդն զքեզ օրհնող և վասն կենաց քոց աղօթող լինին, և զու վործս ի Բրիտտոսէ ընկալցիս: — Թվին ՌՃԺԿ (= 1664) և սեպտեմբերի ԺԴ. օրն չորեքշաբաթի և յինն ժամուն, ի յԱպու Տաութի քովս. հրամանուցդ սէլամու քէլամ կու մատուցանէ և հրամանուցդ հանապաղ զբարեկործութիւնդ կու պատմէ ի լսելիս ամենեցուն:

Հրատ.՝ Մ. Ե. Ն.

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Երեկ կեղծիքը արդարանալի բաւ մը չէ սկսիլիս համար, սեղի անարդարանալի և զօրանիլիս համար, որ սկսար խաբելով զայն իր կորուսիլի կ'առաջնորդի:

*

Նենգաւոր մարդամանուկան շողովներուն անձնասուր ըլլալ՝ քոյն խմել և ոսկեղեն բաժակի:

*

Ձանգեք հաճոյանալ, բայց յիշեցիք թէ շոդոբորելը խաբել է:

(*) Սարգիս Թէֆրեզադցի՝ եկիցն պատրիարք Կ. Պոլսի, 1664-1665 եւ 1667-1670: Ծ. 2.